անյայտ են, բայց անպայման իւր մերձաւորներըը։

Այս միևնոյն Դաւիթ իշխանը նոյն սրահում, որ իշխանական գերեզմանատուն է շատ տոհմերի համար, արևելեան կողմից՝ Ս. Սարգսի դրան մօտ, կանգնել է մի խաչարձան իւր հօր դամբարանի վերայ. պատուանդանը գորշ, իսկ բուն խաչաքարը կարմիր քարից, նուրբ քանդակուած, նաև խորքում, դաշտի վերայ. շատ գեղեցիկ են քանդակուած անօթները (փարչերը)։ Խաչի վերին թևերի մօտ՝ երկու կողմից՝ երկու վիշապ, մէկի պոչն էլ վիշապագլուխ։ Խաչարձանի ճակատին հետևեալ արձանագրութիւնը կայ.

«Ես Դաւիթ իշխանաց իշխան կանգնեցի զսբ. Նշանս, գերեզմանի հաւր իմոյ Գրիգորի որք երկրպագիք յաղաւթս յիշեցէք»։

Խաչարձանի առաջ՝ ներքևում ձգուած է մի տափակ քար, որի տակ ամփոփուած էր ննջեցեալը և վերան գրուած. «Գրիգոր»։

Խծկոնից վանքի արձանագրութիւնը ոչ միայն հաստատում է այս խաչարձանի տուած տեղեկութիւնը Դաւիթ իշխանի հօր անուան մասին, այլ և մանրամասնութիւններ նորա անձի և զաւակների. «Դաւիթ որդի Գրիգորոյ զաւրավար ամիր սպասալարին Զաքարեայի» իւր զաւակներ՝ Գրիգորի և Գայլ Շէրպարիքի(1) հետ տալիս է վահանառճի գլուղի կէսը Ս. Սարգսին՝ յիշատակ իւր և ծնողներին և ստանում հայր Յովհաննեսի, վարդապետի(2) և միւս միաբանների կողմից բոլոր եկեղեցիների պատարագները ամէն տարի Դաւթի և Յակոբայ, Պօղոսի և Պետրոսի եւ Շողակաթի տօներին (պատկ. 13. ձախ կողմի արձ.)(3)։

1. : Յանուն այ ՈԿԳ : թուականիս։
2. : Ես Դաւիթ որդի Գրիգորոյ զ
3. աւրաւար ամիր սպասալարին Զաք
4. արիւտ տեսի զպայծառուքի սբ
5. աւխտիս Խծկաւնից ես եւ որդիք իմ
6. հարազատք Գրիգոր և Գայլս Շէր
7. պարիք եւ էտու զիմ զսէիհականն
8. զգիւղն զվահանառճիղղ(1) զկէսն
9. ի սբ Սարգիս յիշատակ լինձ և ծն
10. ողաց իմոց վասն որո հայրս Յովհ
11. նէս եւ վարդապետս եւ այլ միաբա
12. նքս հաստատեցին զԴաւթի եւ զ
13. Յակոբա զՊաւղոսի և զՊետրո
14. սի եւ զսբ Շողակաթին զպատարա
15. գն յամենայն ամի որ լինի յամ
16. ենայն եկեղեցիքս լինձ առնել ան
17. խափան էթէ ոք հակառակի ի հար
18. անց եւ կամ ի պատրանաց եւ զի
19. մ գյիշատակս խափանէ որչա
20. փ ած. աւրհնած է այնչափ այն մարդն
21. (գարնէզի վերայ) անիծեալ է։

Այս բոլոր արձանագրութիւնների մէջ, Դաւիթ անունով իշխանին մենք նոյն անձնաւորութիւնն ընդունեցինք. արդեօ՞ք համապատասխան է այդ իրականութեան և հիմք ունինք այդպէս ընդունելու։

Նախ Զաքարիա մեծի կողմից Հաղբատի ՈՄԲ. և Խծկոնից ՈԿ թուականների արձանագրութիւնների մէջ Դաւիթը կոչուած է որդի Շոթռկայ. այդպէս է անուանում ինքն իրեն նաև Դաւիթ Սանահնի ՈՀԱ. թուի արձանագրութեան մէջ, իսկ Բռնաւորը իւր յիշատակարանի մէջ Դաւիթ «Շոթռուկանց»։ Ցաճախ է պատահում արձանագրութիւնների և յիշատակարանների մէջ, որ «որդիք» կամ «թոռունք» այս ինչի կամ այն ինչի ազգանուան կամ տոհմի նշանակութիւն ունի. օրինակ Գրիգոր Անաւարզեցու դէմ Ստեփանոս Օրբէլեանի գլխաւորութեամբ գումարուած ժողովի ձեռնարկին ստորագրում են «որդիք բուրևպաշտ իշխանին Պռոշայ» պապաք եւ Էաչի. մինչդեռ Էաչին Պռոշի թոռն է եւ ոչ որդին(2)։ Գլաձորի գպրոցի Յունան

(1) Մեզ թուում է արձանագրութեան «Գայլս Շէրպարիք» մի անձն է երկանուն։

(2) Վարդապետը հաւանօրէն Պաւղոսն է, որ յիշուած է աւետարանի յիշատակարանի մէջ։

(3) Խծկոնից վանքին եւ նորա արձանագրութիւնների ամբողջութեան մասին առանձին յօդուած պիտի գրենք։

(1) Չորրորդ տողում «զպայծառուքի» բառի մէջ ը միացած է թ ի ծողի հետ։ Ութերորդ տողում ղ եւ ը մի եւ նոյն ծողի վերայ միացած, եւ գ ի բոլորակի ներքեւի հորիզոնականը. մեզ թուում է գրիչը սխալուել է եւ այդ ձեւով ուղղել իւր սխալը. այդ դէպքում պէտք է կարդալ «զվահանառճի զկէսն»։ Քսանմէկերորդ տողում աճ կոտրած։ Արձանագրութեան դաշտը սպիտակցրած է, բայց յետոյ։

(2) Օրբէլեան. Ղուկ. հրատ. 463։ Մեր «Խաղբակեանք». եր. 145. 183։